ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

Օսմանյան կայսրությունը կապիտալիստական հարաբերությունների զարգացման փուլը թևակոխեց անցյալ դարի երկրորդ կեսին։ Մինչ այդ եղած տեղաշարժերը, որոնց ուղղակի արտացոլումն են հանդիսանում, այսպես կոչված, Թանզիմաթի շրջանի ռեֆորմները, կարելի է գնահատել որպես նկարագրվող ժամանակահատվածի և նրա բարեփոխումների նախապատմությունը։

Հանրահայտ է, որ Օսմանյան կայսրությունը միավորել էր էթնիկական կազմով ու զարգացման աստիճանով միանգամայն տարբեր երկրներ ու շրջաններ, որի հետևանքով նրանում ծայր էին առել այն հակասությունները (երբեմն անլուծելի), որոնք զգայի կերպով ազդում էին երկրի տնտեսական ու քաղաքական զարգացման ընթացքի վրա։ Ձևավորվող կապիտալիստական հարաբերությունների, ֆեոդալական այլազան ձևերի, նահապետական ու ցեղային կապերի առկայությունը և միջանկյալ սոցիալական կազմակերպությունների ու կատեգորիաների համակեցությունը մի կողմից, կրոնական ու ազգային հետզհետե սրվող հարաբերությունները՝ մյուս կողմից, կազմում են մի ընդհանուր ֆոն, որի վրա նկատելի էր նոր ուժերի պայքարը հնի դեմ՝ հաճախ չափազանց խճճված ու բարդ միակցությունների մեջ, հատկապես գյուղատնտեսության ասպարեզում։

Նման իրադրության նկատմամբ մեթոդոլոգիական ճիշտ մոտեցման և մեկնաբանման ելակետ է հանդիսանում Վ. Ի. Լենինի այն դրույթը, որ «կապիտալիզմը հողագործության մեջ (ինչպես նաև արդյունաբերության մեջ) չի կարող համաչափ զարգանալ. նա մի վայրում (մի երկրում, մի ռայոնում, մի տնտեսության մեջ) գյուղատնտեսության մի կողմն է առաջ մղում, մի ուրիշում՝ մի ուրիշ կողմը և այլն»[1]։

Ահա այս տեսանկյունից էլ ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում քննարկվող հարցը։

Ժամանակակից թուրք տնտեսագետ Օյա Կոյմենի արտահայտությամբ, «Օսմանյան հողը՝ հողագործության և առևտրի տեսակետից, ինչպես և բաղաքական ու ռազմական առումով, գտնվում էր այնպիսի մի վայրում, որի հավասարը չկա աշխարհում»[2]։ Համաձայնվելով այս բնորոշման հետ, ուզում

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 3, էջ 391։

[2] О. Коймен, Империализм свободной торговли. Оттоманская империя. V международный конгресс экономической истории, Ленинград, 10—14 VIII 1970 г., М., 1970, էջ 10։

ենք, սակայն, ընդծել, որ հենց ամենագլխավոր հարստության՝ հողի մշակման մակարդակը անցյալ և ներկա դարերի սահմանագլխին վկայում է մեծ հնարավորությունների օգտագործման վրոքր մասշտաբների մասին։

Թուրք հեղինակները, սովորաբար, երկրի հետամնացության պատճառները փնտրում են օտարների տիրապետության մեջ և տարիներ շարունակ պնդում, որ «անարդարացի է, երբ թուրքերին համարում են անընդունակ օգտագործելու Անատոլիայի հարստությունները։ Իսկ ոմանք նրանց մեղադրում են դրանք ոչնչացնելու մեջ։ Դա անիրավացի մեղադրանք է»[3]։ Դիմենք փաստերին։

Քանի որ վիճակագրության բացակայությունը դժվարացնում է կատարել մանրամասն վերլուծություններ, հետևաբար պետք է բավարարվենք տարբեր հեղինակներից մասնակի մեջբերումներով, որոնք, կարծում ենք, միանգամայն բավական են քննարկվող հարցի վերաբերյալ պատկերացում կազմելու համար։ Այսպես, հենվելով հայտնի ռուս գիտնական ու ճանապարհորդ, Թուրքիայի լավագույն գիտակ Պ. Ա. Զիխաչևի տվյալների վրա, Ե. Թոփչյանը հաղորդում է, որ այս կամ այն կերպ օգտագործվում էր փոքրասիական տարածությունների միայն 40%-ը[4]։ Հայտնի տնտեսագետ Վահան Թոթոմյանցի տվյալներով մշակվում էր կայսրության հողերի միայն 10%-ը[5]։ Կան բազմաթիվ այլ տվյալներ, որոնք ցույց են տալիս մշակվող հողերի ավելի ցածր տոկոս, քան նշվածները, սակայն ընդհանուր կարծիքն այն է, որ մինչև առաջին համաշխարհային պատերազմը Օսմանյան կայսրության մշակվող հողերի տոկոսը կազմում է 5—7[6]։ Թուրքական պաշտոնական տվյալների համաձայն 1927 թ. մշակվող տարածությունները կազմում էին բոլոր հողերի դեռևս միայն 5%-ը[7]։ Այս երևույթը, անշուշտ, առաջին հերթին զարգացման ցածր աստիճանի հետևանք է։ Ոչ պակաս կարևորություն ունեցող հանգամանք էր նաև այն, որ երկրի կառավարող շրջանները իրենց հարստության աղբյուրի՝ հողի նկատմամբ ցուցաբերում էին զարմանալի անտարբերություն։ Բացատրելով դրա պատճառները, թուրք հեղինակ Խալիս Օկանը իրավացիորեն նշում է, որ «օսմանյան ֆեոդալները չէին զբաղվում տնտեսական գործունեությամբ, հողամասերի շահագործմամբ և առևտրով. հողը հանդիսանում էր միմիայն տուրքերի աղբյուր։ Հարստացման գլխավոր միջոցը դարձել էին պատերազմները և նրանց հետ կապված՝ թալանը, հարկերը և ճորտերը...»[8]։

Թերևս դրանով էլ պետք է բացատրել այն երևույթը, որ Թուրքիայում դարեր շարունակ գոյություն չունեին հողամասերի կամ հանդակների ճշգրիտ սահմանագծեր։ Բայց սեփականատիրության և կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում այդ հարցը ստանում է մեծ կարևորու-

[3] La Turquie modern, „Turc Yourdou", Geneve, 1919, № 2, էջ 66։

[4] Ս. Թոփչյան, Երիտասարդ թուրքերը և հայերը, Թիֆլիս, 1909, էջ 38։ Տե՛ս նաև Խանչյան, Աշխարհագրություն օսմանյան պետության, Կ. Պոլիս, 1912, էջ 179։

[5] «Современный мир», 1908, № 10, էջ 20։

[6] В. М. Кечеджи-Шаповалов, Экономическая Турция, П.-г., 1915, էջ 31; А. Адамов, О положении земледелия в Ираке Арабском (Архив внешней политики России, ф. «Новый турецкий стол», 1904, д. 7643, л. 4), И. Бутаев, Проблемы Турции, Л., 1925, էջ 44—45։

[7] Проф. М. П. Жуковский, Земледельческая Турция, М.—Л., 1933, էջ 23։

[8] Халис Окан, Развитие на капитализма в Турция, София, 1961, էջ 10։

Բյուն։ Պատահական չէ, որ Թուրքական պառլամենտի հայ երեսփոխանների ուղղությամբ 1913 թ. փետրվարի 5-ին օրենք է ընդունվում հողամասերի չափի, սահմանների, գնի, անշարժ գույքի կառուցման և առհասարակ նման հարցերի իրավական ձևակերպման կարգի մասին[9]։ Սակայն բազմաթիվ այլ օրենքների կողքին, այս կարևոր օրենսդրական ակտը ևս մնաց միայն թղթի վրա, քանի որ այն չէր համապատասխանում տիրող ռազմաֆեոդալական վերնախավի շահերին։

Չափազանց խորհրդանշական վերնագիր կրող «Ինչո՞ւ ենք ահա արդեն 200 տարի դոփում տեղում» հոդվածում, Նիյազի Բերքեսը ցույց է տալիս նրման քաղաքականության կիրառման արդյունքները։ Գալվածատերերն ու աղաները կազմում են գյուղական ազգաբնակչության 5%-ը միայն, իսկ նրանց ձեռքում կենտրոնացած է մշակվող հողերի երկու երրորդը։ Ազգաբնակչության 87 %-ը կազմող գյուղացիությունը օգտվում է այդ հողերի 35 %-ից միայն։ Գյուղացիների 8%-ը հողազուրկ է։ «15—20 հազար հեկտար խոշոր հողային տիրույթների կողքին մեկ գյուղացուն միջին հաշվով ընկնում է կես հեկտար հող»[10]։ Մոտավորապես նույն տվյալները մենք տեսնում ենք նաև սովետական հետազոտողներ Ա. Դ. Նովիչևի[11], Լ. Վակսի[12] և այլոց մոտ։

Երկրի խոշորագույն հողատերը սուլթանն էր, որը տիրում էր լավագույն հողերի՝ մոտ 3,5 մլն դեսյատին ընդհանուր տարածությամբ[13]։

Մինչև Թանզիմաթի «ռեֆորմները» հողային իրավունքի բնագավառում հիմնական սկզբունքները բխում էին շարիաթի դրույթներից։ Մշակված քաղաքացիական օրենսդրության («մեջելլե») մեջ կային հատուկ օրենքներ հողային հարցի վերաբերյալ, որոնք դեռևս անցյալ դարի 60—70-ական թթ. ամփոփվել էին մեկ օրենսգրքի մեջ, ստանալով «Հողային օրենսդրություն» («էրազի կանուննամեսի») անվանումը։ Նշված «Կանուննամեի» մեջ արդեն մենք նկատում ենք ֆեոդալական հողատիրությունից դեպի կապիտալիստական ձևերի անցումն օրինականացնելու փորձեր։

Մինչ այդ գոյություն ունեցող հողային սեփականությունը, որը կոչվում էր «մյուլք» և բավական լայն տարածում էր գտել հատկապես Եվրոպական Թուրքիայում՝ «չիֆթլիկ» անվան տակ, ավելի որոշակի վիճակի մեջ է դրվում 1858 թ. օրենքի հիման վրա և կոնկրետանում 1867 թ. ժառանգության մասին ընդունված օրենքով, որը ժառանգելու իրավունք է ընձեռում ուղղակի և անուղղակի արյունակից 8 կարգի ներկայացուցիչների։

Հողատիրության հաջորդ ձևը, որը հիմք էր ծառայում մասնավոր սեփականության ընդլայնմանը, դա պետական այն հողերն էին, որոնք կոչվում էին «էրազի միրիե» (ճիշտը՝ «էմիրիե»)։ Անցյալ դարի վերջին սրանց մեծ մասը արդեն գտնվում էր մասնավոր անձանց ու կազմակերպությունների ձեռքին,

---

[9] Н. А. Ленский. О правовом положении землевладения в Турецкой Армении, П-г., 1916, էջ 13։

[10] Niyazi Berkes, Iki yuz yıldır neden bocaliyoruz? „Yon", Ankara, 1964; № 1.

[11] А. Д. Новичев. Экономика Турции в период мировой войны, М.—Л., 1935, էջ 9։

[12] Л. Вакс. Очерки истории национально-буржуазных революций на Востоке, М.—Л., 1931, էջ 40։

[13] Ռ. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965, էջ 55։

դրանք ժառանգվում էին, վաճառվում կամ նվիրվում։ Հարցի ականավոր մասնագետ Դ. Բաքրաձեի կարծիքով նշված ժամանակաշրջանում «էրազի միրիե»-ն, մասնավոր հողատիրության ամենից տարածված ձևն էր Թուրքիայում»[14]։

Մզկիթներին և կրոնական այլ կազմակերպություններին պատկանող հողային տարածությունները ընդլայնվում էին սիստեմատիկ կերպով և որոշ տեղերում գրավում հողերի 40—70%-ը[15]։ Սրանց ընդարձակումը տեղի էր ունենում թե՛ պետության և մասնավոր անձանց նվիրատվությունների, և թե՛ մանր հողատերերի հողերի միացման հաշվին։ Վերջիններս պետական հարկերից, աղաների ու բեգերի հարստահարություններից, պաշտոնյա և անպաշտոն ավազակների բռնագրավումներից և թալանից ազատվելու նպատակով, իրենց հողերը նվիրում կամ չափազանց ցածր գներով «վաճառում» էին մզկիթներին ու կրոնական կազմակերպություններին։ Միակ պայմանը լինում էր այն, որ սրանք և իրենց ժառանգները շարունակում էին մշակել նույն հանդակը՝ վճարելով տուրքն ու հարկը, կատարելով կոռն ու բեգյառը միայն վանքի համար։ Բազմապիսի կեղեքումներից ազատվելու նպատակով, նշում է Ռ. Լյուքսեմբուրգը իր «Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան» չափազանց հետաքրքիր հոդվածում, գյուղացին ստիպված էր իր հողակտորը «փոխանցել մահմեդական եկեղեցուն և ապա տոկոս վճարելով վերցնել այն որպես վարձակալական, բայց գոնե տասանորդի տուրքից զերծ հող»[16]։ Ֆեոդալական պետության, թուրքական կարգերի դեմ բողոքի մի արտահայտություն էր այս երևույթը, հակաֆեոդալական պայքարի մի պասսիվ ձև։ Ինչպես նշում է հողային օրենքի մեկնաբանողներից մեկը, իր հանդակը վակֆային սեփականություն դարձնելիս մանր հողատիրոջ համար «ոչ թե կրոնական զգացմունքը, այլ անձնական շահն էր հիմնականը»։ Որովհետև, թեև նա ձևականորեն կորցնում էր «սեփականության իրավունքը, սակայն իր և իր ժառանգների համար ապահովում էր անձեռնմխելիությունը, հարկերից ազատ հողատիրությունը»[17]։ Այս տեսանկյունից հետաքրքրական է Մարքսի սահմանումը վակուֆի վերաբերյալ, որպես «մշտական մասնավոր սեփականություն»[18], որը ինչ-որ չափով ապահովում է հողի անվանական տիրոջ կենսամակարդակը և նա զոհ չի գնում կամայականությունների։ Այս բանը մոտեցնում է վերոբերյալ հողատիրությունը բուրժուական սեփականության ձևերին։ Ուրեմն կարելի է կրկնել այն միտքը, որ վակուֆային հողատիրության մի մասը որոշ իմաստով հակաֆեոդալական երանգ ունի։

Գոյություն ունեն հողատիրության ևս երկու ձևեր՝ «արազի մեթրուկե» (արոտավայրեր, յայլաներ, անասունների ձմեռանոցներ, ճանապարհներ, ան-

---

[14] Դմ. Բակրաձե, Исторический очерк турецкой системы землевладения, Тифлис, 1889, էջ 20։

[15] «Մուրճ», 1893, № 5, էջ 777։

[16] Տե՛ս Գ. Բ. Զարիբջանյան, Ռոզա Լյուքսեմբուրգի նորահայտ հոդվածը արևելյան հարցի մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 146։

[17] Das ottomanische Immobiliarrecht von Dr. Emridi Fryda von Kahrimsky, Weltwirtschaftliches Archiv, 9 Band, Heft 1, Januar, 1917, էջ 40—41։

[18] Տե՛ս Հ. Գամայունով, О записях К. Маркса, сделанных им при изучении книги Максима Ковалевского «Общинное землевладение, причины, ход и последствия его разложения», «Советское востоковедение», 1958, № 4, էջ 15։

տառներ և հասարակական օգտագործման այլ վայրեր) և «արաղի մեվաթ» (հեռավոր, ոչ պետական, «մեռած հողեր»)։

Պետական հողերի հաշվին սեփական հողերի ընդլայնման պրոցեսը Խալիս Օկանը համարում է «կապիտալի նախնական կուտակման հիմքը Թուրքիայում, որը ընդգրկում է XVIII դարից մինչև XIX դարի առաջին կեսը ներառյալ»[19]։ Այս տեսակետի հետ կարելի է համաձայնվել մասամբ միայն։ Հայտնի է, որ անցյալ դարի երկրորդ կեսին ևս շարունակվեց նույն պրոցեսը և կապիտալիզմի զարգացումը չընդունեց արևելքի երկրների համար սովորական, նորմալ տեմպեր։ Մյուս կողմից, սեփականատիրական հողատարածությունների մեծացմամբ չի սահմանափակվում կապիտալի նախնական կուտակումը։ Նա ընդունում է բազմաթիվ ու բազմապիսի ձևեր. մասնավորապես Օսմանյան կայսրության համար կարևոր դեր կատարեցին կուտակման այնպիսի միջոցները, ինչպիսիք էին հարկերն ու տուրքերը, «որոնց անվան տակ աճում էին աղգաբնակչությունից շարունակ գանձվող գումարները»[20], ինչպես նաև սեփական ժողովրդի կողոպուտի այլ ուղիները, ներքին և արտաքին առևտուրը, ներքին որոշ հարստությունների օգտագործումը և այլն։ Այսպիսով, մասնավոր հողատիրությունը, ընդարձակելով իր սահմանները, ընդգրկեց համարյա ամբողջ Եվրոպական Թուրքիան, և «ագարակը» («չիֆթլիկ») դարձավ հողատիրության հիմնական ձևը։ XX դարի սկզբին «Մակեդոնիայի համարյա ամբողջ հողը կազմում էր այսպես կոչված թուրքական «չիֆթլիկչիների» սեփականությունը»[21]։

Այլ էր պատկերը կայսրության ասիական և աֆրիկական մասերում։ Այստեղ ֆեոդալական հողատիրությունը պահպանում է իր աղդեցությունը և նույնիսկ ընդլայնում սահմանները։ Սակայն մասնավոր սեփականության իրավունքը գործում է որպես բայքային գործոն և տեղ է բացում նորի կամ հնի ու նորի խառը ձևերի համար։ Նշված ժամանակահատվածում մենք հանդիպում ենք այսպիսի բնորոշ օրինակների. Ստամբուլի բնակիչ բանկիր Զարիֆին Բաղդատի վիլայեթում պետությունից գնում է 50000 հեկտար հող և այնտեղ ցանում բրինձ ու բամբակ։ Վանի մեծահարուստ, վաշխառու և խոշոր հողատեր Թեմիր-Օղլու ընտանիքը ձեռք է բերում նորանոր հողեր, անշարժ գույք և ծավալում ընդարձակ առևտուր։ Խարբերդի կալվածատեր ու առևտրական Հաջի Իզզեթ փաշան ամեն կերպ ընդլայնում է իր տիրույթների սահմանները, որոնց տարածությունը հավասարվել էր «մի ամբողջ դավառի» մակերեսի[22]։ Սիրիայի Համա քաղաքի շրջակայքի հողերը բռնագրավել էին հինգ հարուստ ընտանիքներ, որոնք առևտրի ու արհեստավորների աշխատանքը շահագործելու ճանապարհով դարձել էին հողատերեր[23]։

Այդ երևույթը տեղի ունի նույնիսկ «ավաղակային ֆեոդալիզմի» մակարդակի վրա գտնվող քուրդ, չերքեզ, քոչվոր-արաբ բեկերի ու աղաների շրջանում։

Խոշոր հողատերերի մեծագույն մասը թուրքեր էին ու մահմեդական այլ ժողովուրդների ներկայացուցիչներ։ Այս հանգամանքը ուներ չափազանց կա-

---

19 Халис Окан, նշվ. աշխ., էջ 16։

20 Dr. Konan Bulutoglu, Türk vergi sistemi, Istanbul, 1967, էջ 2։

21 Х. Г. Инсаров, Турция и Македония, «Вестник Европы», т. 4, 1903, էջ 669։ «Турецкий сборник», под ред. Г. М. Бикермана, СПб., 1909, էջ 139։

22 Центральный гос. военно-исторический архив, ф. 82, оп. 86, д. 3049, թ. 352, 353։

23 Артур Руппин, Современная Сирия и Палестина, П-г., 1919, էջ 63։

բևոր նշանակություն երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում և պահպանվում էր թե՛ շարիաթով, թե՛ քաղաքացիական իրավունքով։ Կ. Մարքսը դեռևս անցյալ դարի կեսերին նշել է, որ մահմեդականների և այլ կրոնների ներկայացուցիչների միջև հավասարություն պահանջելը «անվերապահորեն նշանակում է իրականում՝ Ղուրանը վոխել նոր քաղաքացիական օրենսդրությամբ, ուրիշ խոսքով նշանակում է՝ քարուքանդ անել Թուրքական հասարակությունը և նրա ավերակների վրա ստեղծել իրերի նոր դրություն»[24]։ Ֆրանսիացի արևելագետ Պոլ Ժանտիզոնը հիշյալ անհավասարությունը համարել է «մահմեդական իրավունքի խոշոր թերությունը, որի հետևանքով ստեղծվել էր սոցիալական հանգույց պետության բոլոր ժողովուրդների միջև և հավատացյալների ու անհավատացյալների միջև անցկացվել սահմանազատման գիծ»։ Վերջիններս «երբեք չեն կարող դառնալ բառիս բուն իմաստով քաղաքացիներ։ Նրանք կմնան ստրուկներ (ilotes)»[25]։ Այս միտքը հաստատել են տարբեր ուղղությունների Թուրք ժամանակակից գործիչներ ու հեղինակներ։ Երիտթուրքերի ղեկավարներից իշխան Սաբահեդդինի կարծիքով «Թուրքիայի սոցիալական ուժը ամենից առաջ կրոնի մեջ է»[26]։ 1908 թ. հեղաշրջումից հետո էլ պատմաբան Յուսուֆ Ֆեհմին գտնում էր, որ Թուրքիայի «ուժը և հզորությունը պետք է հենվեն իսլամի և խալիֆաթի վրա»[27]։ Սակայն այդ հանգամանքը բնավ արգելը չհանդիսացավ, որպեսզի խոշոր հողատերեր դառնան նաև սլավոնները, հույները, հայերը, հրեաները, լևանտացիները և այլք։ Վերջիններս ավելի սերտ կապերով կապված լինելով շուկայի, մեծ քաղաքների և նույնիսկ արտասահմանի հետ, շահագրգռված էին զարկ տալու հողի մշակման կապիտալիստական ձևերին, գործադրելու ագրոնոմիայի ժամանակակից միջոցներ, օգտագործելու գյուղատնտեսական մեքենաներ և այլն։ Կ. Մարքսի արտահայտությամբ նրանք հանդիսանում են «իրապես երկիրը մուտք գործող ամեն մի քաղաքակրթության իսկական հենարանը»[28]։ Հենց այս իմաստով էլ Ռ. Լյուքսեմբուրգը նշում է, որ «քրիստոնյա երկրների ազատագրումը Թուրքիայից միջազգային քաղաքական կյանքում առաջադիմություն է նշանակում։ Արհեստական այդպիսի վիճակի գոյությունը, ինչպես այսօրվա Թուրքիան է,... քաղաքական ընդհանուր զարգացումը արգելակում է և դանդաղեցնում»[29]։

Երկրի ֆեոդալական հողատիրությանը լուրջ հարված էր հասցվել դեռևս 1834 թ., երբ վերացվեց, ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկու արտահայտությամբ, «սոցիալական խոց»[30] հանդիսացող դերբեյությունը։ Նրա վերացումը նշանակում էր XV դարից եկող և ավելի քան 400 տարի տիրապետող ռազմալենային սիստեմի[31] լիկվիդացման սկիզբը (նաև իրավական տեսակետից)։ Սա

---

[24] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 10, էջ 130։

[25] Paul Gentizon, Mustapha Kemal ou L'Orient en marche, Paris, 1929, էջ 203։

[26] Տե՛ս Paul Fesch, Constantinopol aux derniers jours d'Abdul-Hamid, Paris, 1907, էջ 411։

[27] Youssouf Fehmi, Histoire de la Turquie, Paris, 1909, էջ 346։

[28] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 9, էջ 25։

[29] «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, 1971, էջ 144։

[30] Акад. В. А. Гордлевский, Избранные сочинения, т. III, М., 1962, էջ 24։

[31] Дикран Арсланян, Система сельского землевладения в Оттоманской империи, Л., 1932. Հեղինակը գրում է, որ «Օսմանյան լենային սիստեմի վերաբերյալ առաջին պետական որոշումը հրատարակվել է 1376 թ.... և միայն Մահմեդ II-ը (1451—1484) այն դարձրեց օրենսդրության առարկա», էջ 6։

չափազանց խոշոր, նշանակալից քայլ էր հողային հարաբերությունները ճահճացած վիճակից դուրս բերելու և կապիտալիզմի համար զարգացման ուղիներ բանալու ճանապարհին։ Նույն երևույթի մեկ այլ արտահայտությունն էր հողերի առուծախը, նրանց գների բարձրացումը ըստ որակի, քաղաքների ու եկեղեցիների մոտիկության և բնական այլ պայմանների։ Հողի գնի տատանումների վրա իր անդրադարձումն ունեցավ 1867 թ. հունիսի 16-ի օրենքը օտարերկրացիների՝ հողի սեփականություն ձեռք բերելու իրավունքի մասին։ Հետևանքը եղավ այն, որ սկսած 1860-ական թթ. վերջից հողի գինը սկսեց աճել և առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին բարձրացավ «ուղիղ 10 անգամ»[32]։

Դրամը հետզհետե վճռական դեր էր կատարում թե՛ պետության ու ժողովրդի, և թե՛ հողատերերի ու գյուղացիների փոխհարաբերությունների մեջ։ Ականատեսը արձանագրում է, որ XIX դարի վերջին համարյա ամենուր պետական հարկերը, «պետական բոլոր տուրքերը, բացի աշարից, կառավարությունը ստանում է ոսկու հաշվով, ղեղչելով արծաթ դրամների իսկական ու ընթացիկ արժեքից»[33]։

Դրամը դառնում է անհրաժեշտ նաև հողատերերի ու հողը մշակողների փոխհարաբերություններում։ Կայսրության եվրոպական մասում, ծովեզրյա շրջաններում և մեծ քաղաքների մերձակա հողերում ֆեոդալը աշխատում է իր ռենտան ստանալ մեծ մասամբ փողով։

Այդ տենդը դարի վերջին համակում է նույնիսկ ֆեոդալական խավի ամենահետամնաց տարրերին՝ քուրդ աղային ու չերքեզ զինվորականին, որոնք «իրենց թալանի մեջ ժամանակ մը որոշ չափ մը կպահեին և պետք ունենալով գյուղացիին, անկե ամեն բան չէին խլեր։ Բայց այն օրեն, երբ դրամի շրջաբերությունը մուտք գտավ Արևելքի մեջ, անոնք ալ ուզեցին դրամի տեր ըլլալ և աշխատեցան ամեն կերպով պոկել գյուղացին»[34]։

Գնալով մեծանում է նաև բնամթերքով վճարվող ռենտայի, զանազան պարհակների, բազմապիսի հարկերի (որոնց թիվը ըստ Ա. Ֆ. Միլլերի հասնում էր 97-ի[35]) ու տուրքերի ծավալը և քանակը։ Այս դեպքերում, որպես կանոն, տեղի է ունենում հետևյալը. «Երբ բերքը ծախվում է, լավ գին ունի, տասանորդի հավաքող կապալառուն տասանորդը ստանում է առավելությամբ, իսկ երբ նա գին չունի, կապալառուն թանկ գնահատելով բերքը, փողն է պահանջում»[36]։ Ինչպես տեսնում ենք, համարյա ամենուր տիրող նման քաղաքականությունը կապվում է շուկայական գների հետ և ի վնաս հողագործի նրանից կորզվում է առավելագույնը։ «Իսկ վերջին ժամանակները հարկերը դարձյալ դժվարացան և նրանով, որ տերությունը չէ էլ ընդունում թղթադրամ հարկատուներից»[37], այլ պահանջում է «հնչյուն ոսկով»։ Վերլուծելով այս տիպի երևույթները, Ֆ. Էն-

---

32 «Донесения императорских российских консульских представителей за границей по торгово-промышленным вопросам». СПб. 1913, № 29, էջ 23։

33 Հ. Մուրադյան, Հողատիրությունը Թուրքիայում, «Մուրճ», 1899, № 10, էջ 1212—1213։

34 Է. Տ. Բեռնշտայն, Հայկական տանջանքները և Եվրոպան, Ժընև, 1906, էջ 21։

35 А. Ф. Миллер, Мустафа-паша Байрактар, М.—Л., 1947, էջ 37։

36 Գրիգոր Արծրունի, Թուրքաց Հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 31։

37 Նույն տեղում, էջ 32։

գելսը ցույց է տալիս, որ «ամենուրեք, ուր անձնական հարաբերությունները ետ էին մղվում փողային հարաբերություններով, բնատուրքի փոխարեն փող էին վճարում, այնտեղ ֆեոդալական հարաբերությանը փոխարինում էր բուրժուականը»[38]։

Առևտրա-դրամական հարաբերությունները, ինչպես ամենուր, իրենց հետ բերեցին գյուղացու շահագործման ավելի ինտենսիվ ձևեր, որոնք հների կողքին և նրանց զուգահեռ իրենց գոյությունը պահպանեցին երկար տարիներ։ Հողազրկության մեծացումը նշանակում էր հողի վարձակալների թվի մեծացում։ Ինչքան դեպի երկրի զարգացած ծայրամասերը, այնքան ավելի փոքրանում է վարձակալվող հողակտորը և հակառակը։ Սակայն շահագործման աստիճանը ուներ միանգամայն հակադարձ պատկեր՝ փոքր, բայց շահութաբեր հողամասից ավելի շատ էր վերցվում, քան երկրի խորքում ընկած խոշոր հողակտորներից։ Իսկ ընդհանրապես ֆեոդալ-հողատերերը խորություն չէին դնում շահագործման ձևերի մեջ։ Սկսած բոլորովին ձրի («անդարիա») աշխատանքից, կոռ ու բեգյառի զանազան տարբերակներից մինչև վարձու աշխատանքը և աշխատանքի այլ խառը ձևերը օգտագործվում էին երկրի տարբեր մասերում։

Հետամնաց տնտեսություններում վարձակալին ստիպում էին աշխատել ոչ միայն դաշտում, այլև տանը, ոչ միայն ամռանը, այլև ձմռանը, հարկադրելով իր կնոջ ու զավակների հետ, գյուղատնտեսական աշխատանքներին զուգահեռ հոգալ նաև հողատիրոջ տնտեսության պետքերը։

Բայց հողի վարձակալ գյուղացին պարտավոր էր վճարել նաև պետական հարկերը (աշար, հողային հարկ և այլ հարկեր ու նրանց տոկոսները) և ասես մնացածը կիսել։ Իսկ կիսածի 50%-ն էլ չէր մնում գյուղացուն։ Հաճախ սերմացուն տալիս էր հողատերը և դրա դիմաց ստանում բաժանվող բերքի նորից 9—10%։ Ա. Մ. Կոլյուբյակինի հաշվումներով «բերքի 75,75%-ից մինչև 86,75%-ը գյուղացին հանձնում է և ստիպված է բավարարվել 24,25 կամ 13,25%-ով»[39]։ Այսքանն էլ, հաճախ, չէր մնում նրան։ Ծանր վիճակից ու հարկերից փախած մի մշեցու վկայությամբ գյուղացին աղայի հասանելիքը «մինչև քաղաք փոխադրել պարտի, և ձմռանը փոխատուի ձիերն, գոմեշներն դարմանելու, խնամելու հողը, ասոնցմե պատ, գյուղացին ամառը՝ 2—3 ամիս փոխատուն իր ծառաներով ու մանչերով իր տունն տի հյուրընկալի, և նորա ուտեստն ու պետքերն տի հոգա, որպեսզի հունձքի բաժանման ատեն արտը դա և հսկե, որ գողություն չլինի»[40]։ Ուրեմն հողատերը կամ պարտքատեր-վաշխառուն գյուղացու հասանելիքից օգտվում է թե՛ մինչև բերքահավաքը, և թե՛ հետո՝ համարյա տարին բոլոր։ Ավելի վառ գույներով է ներկայացնում գյուղացու վիճակը Գարեգին Սրվանձտյանցը, երբ անցյալ դարի 80-ական թթ. շրջում է Վանի և Բաղեշի (Բիթլիսի) վիլայեթները՝ մոտիկից ծանոթանալու համար ժողովրդի դրությանը։ Նա նկարագրում է, թե ինչպես աշնանը կալի շուրջն են հավաքվում «շինական հարսն ու աղջիկ, ծեր ու մանկտին, ագռավն ու աղավնին, ճնճղուկն ու արագիլ, մրջյունն ու պոլոջը, եզն ու եզնավարն, էշն ու գոմեշն, սալն ու սայլվորիկ, շեյխն ու տերվիշ, վարդապետն ու երեց, շահնան (հարկահավաք)

---

38 Ф. Энгельс, О разложении феодализма и развитии буржуазии, տե՛ս К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. I, М., 1937, էջ 441։

39 ЦГВИА, ф. 82, оп. 86, д. 3053, թ. 388։

40 «Հանդես դրական և պատմական», գիրք I, Մոսկվա, 1888, էջ 228։

ու բուրդ բեկն, Վանա սովյուլն ու Բաղիշո չարյին, Հարկահանն ու պարտապահանջն, նախիրն և խաշինք, ամենն ալ կալերու շուրջն առած իրենց բաժիններ կկրեն։ Հարդն գոնե Յողուն կալատիրոջ ձեթկիկ (փոքրիկ) ձագերուն քանի մը օրվան համար սնունդ...։

Եվ կան որ կստիպեն արտգել, վերցնել կալը, որպեսզի հնձված արտին տիրեն, զի խեղճ գյուղացին պարտուց փոխարեն հողն ալ գրավ է դրել, և պայմանաժամն լրացյալ է. դատարանի պաշտոնյայք ներկա են, որք օրինաց սառնությամբ կվճռեն ու կհանձնեն՝ գրավողին իբրև իրավունք արտն շինականին, կյանքն շինականին...»[41]։

Շահագործման տարբեր ձևերն ու պայմանները Օսմանյան կայսրության գյուղացիության մեծ մասի համար ստեղծել էին կախյալ վիճակ։ Ինչպես նշել է ուսումնասիրողների զգալի մասը, գյուղացին գտնվում էր «մարաբայի» (կիսբար կամ մի մասը ստանալու պայմանով աշխատողի) վիճակում[42]։ Նրանից բացի կային ազատ հողատերեր և հողազուրկ գյուղացիներ և կամ բատրակներ ու սեզոնային բանվորներ։ Վերջիններիս թիվը մեծ չէր և նրանք վճռական դեր չէին կատարում գյուղատնտեսության մեջ։ Սակայն որքան դեպի արևմուտք, դեպի ծովեզրյա վայրերը և մեծ քաղաքների մերձակայքը, այնքան աճում է վարձու աշխատողների տեսակարար կշիռը և նրանց նշանակությունը տնտեսության մեջ։ Վ. Ի. Լենինը բանվորական ուժի տեղաշարժը գյուղատնտեսության մեջ դիտում է որպես պրոգրեսիվ երևույթ, իսկ սեզոնային բանվորների կուտակումը առանձին վայրերում՝ «բանվորական շուկաների» ստեղծումը որպես զարգացող կապիտալիստական հարաբերությունների խորհրդանիշ[43]։

Այս երևույթը մենք տեսնում ենք կայսրության բազմաթիվ քաղաքներում՝ Կ. Պոլսում, Իզմիրում, Բեյրութում, Տրապիզոնում, Բաղդատում, Դամասկոսում, Ադանայում և այլուր։ Օրինակ, Ադանա քաղաքի բնակիչների թիվը հավասար էր 45 հազարի, իսկ «պանդուխտ կամ բանվոր լսածներուն թիվն է 12—15000, որոնք ամեն տարի երկու-երեք ամիս կկենան աստ բամբակը կլպելու և իստակելու համար»[44]։ Վարձու բանվորների կարիք է զգում ոչ միայն Ադանան, այլև Մերսինը և վիլայեթի այլ կենտրոններ։ Ընդհանուր առմամբ, այլ նահանգներից այստեղ է գալիս մոտ 100 հազար վարձու բանվոր[45], և այդ տեղի է ունենում առաջին համաշխարհային պատերազմին նախորդող 30 տարիների ընթացքում։ Գնդապետ Պուտյատայի հաշվումներով, դաշտերում, այգիներում և բանջարանոցներում աշխատող վարձու բանվորների միջին աշխատավարձը 1880-ական թթ. սկզբին կազմում էր օրական 35—60 կոպեկ, իսկ եթե վարձակալը կերակրում և ապրելու տեղ էր տալիս՝ 15—20 կոպ., կամ 15—20

41 Գ. Սրվանձտյանց, «Համով-հոտով», հատ. Ա, Փարիզ, 1949, էջ 59։

42 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 54։ Е. К. Саркисян, Аграрная политика османского правительства в Западной Армении во второй половине XIX века, 1957, էջ 123—124։ Ռ. Պ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 20։

43 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 265։

44 Հ. Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հատ. 1, Վենետիկ, 1903—1905, էջ 270—271։ Տե՛ս նաև. Полк. Путята, Записка о Малой Азии, Сборник географических топографических и статистических материалов по Азии, вып. 46, СПб, 1896, էջ 123։

45 Н. Бутаев, նշվ. աշխ., էջ 46—47։

ռուբլի տարեկան։ Մասնավորեցնելով առանձին տնտեսությունների նկատմամբ, հեղինակը նշում է, որ 5—6 դեսյատին հողի համար վարձվում էր մեկ բանվոր (տարեկան մոտ 100 ռ. ծախսով), իսկ ավելի մեծ տարածությունների վրա աշխատում էին 2—3 և ավելի բանվորներ[46]։ Մեկ այլ հեղինակի կարծիքով գյուղացու վիճակը այնքան ծանր էր, որ նա նպատակահարմար էր համարում թողնել ամեն ինչ և որպես բատրակ օրական 5—6 պիաստրով (30—35 կոպ.) աշխատել հարուստ հողատերերի մոտ[47]։

Այսպիսով, վարձու աշխատանքը իր ամուր տեղն է գրավում կայսրության բազմաթիվ շրջաններում, մասնավորապես ծովափնյա ֆերմերական (գերմանացիների ու հրեաների գաղութներ, բամբակի, ծխախոտի, ձիթապտղի պլանտացիաներ, պտղատու այգիներ և այլն) տնտեսություններում[48]։ Սակայն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նրա տեսակարար կշիռը գյուղատնտեսության մեջ մնում է դեռևս շատ ցածր։ Կիսարարության և աշխատանքային տարբեր ձևերի ռենտայի կողքին հիշյալ երևույթը Խալիս Օկանը անվանում է «ուժեղ» կապիտալիստական տենդենցներ պարունակող «պրոցես», «կարևոր քայլ» դեպի կապիտալիստական հարաբերությունների հաստատումը[49]։

Այնուհետև կապիտալիստական հարաբերությունների զարգացման ցուցանիշներ են գյուղի ուժեղացող կապը ներքին և արտաքին շուկաների հետ, գյուղատնտեսական արտադրանքի մասնագիտացումը և ապրանքային մասի աճը։ Արդեն XX դարի սկզբին արտահանվող ապրանքների երկու երրորդից ավելին կազմում էին գյուղատնտեսական մթերքները և հումքը, որոնցից միայն մրգերի և բանջարեղենի մասը հավասար է 30%-ի[50]։ Աճում են տեխնիկական կուլտուրաների ցանքատարածություններն ու նրանց ապրանքային մասը։ Իհարկե, այս բնագավառում չափազանց ակտիվ է «օտար կապիտալը, որը ձեռքերը հասցրեց մինչև գյուղատնտեսական արտադրությունը։ Օրինակ, ծխախոտագործությունը ամբողջապես գտնվում էր օտարների հսկողության տակ»[51]։ 1883 թ. ստանալով ծխախոտի մենաշնորհը, ֆրանսիական հայտնի «Ռեժի դը տաբակ օթթոման» ընկերությունը աշխատում էր ամեն կերպ՝ նյութական շահագրգռվածության, սերմի և ագրոտեխնիկայի բարելավման, հարկադրական և այլ միջոցներով ընդարձակել ծխախոտի կուլտուրայով զբաղեցրած տարածությունները ու բարձրացնել բերքը։ Վերոբերյալ հանգամանքի և ծխախոտը երկրի ներսում վաճառելու արգելքի կապակցությամբ պահանջի բարձրացումը իսկապես հասցրեցին ծխախոտի պլանտացիաների մեծացման և արտադրանքի աճին։ Համաձայն վիճակագրական տվյալների, ծխախոտի մշակման տակ գտնվող տարածությունները մոտ 30 տարում աճել են 3 անգամ, արտադրանքը՝

---

46 Путята, նշվ. աշխ., էջ 136, 141։

47 А. М. Беркенгейм, Современное экономическое положение Сирии и Палестины, М., 1897, էջ 28։

48 Губерт Аугаген, Очерки природы и сельского хозяйства Сирии и Палестины, П-г., 1916, էջ 87։ Համաձայն հեղինակի ամփոփումների հեկտարի համար վարձվող բանվորների վճարը կազմում է ընդհանուր ծախսերի 30%-ը։

49 Халис Окан, նշվ. աշխ., էջ 17։

50 В. М. Кечеджи-Шаповалов, նշվ. աշխ., էջ 6։

51 Furusan Hüsrev Tökin, Türkiyede siasi partiler ve siasi düsüncenin gelişmesi 1839—1965, Istanbul, 1965, էջ 30։

ավելի քան երկու անգամ, իսկ մեկ աշխատողի արտադրողականությունը՝ մոտ երկու անգամ»[52]։ Այս միջին տվյալները ցույց են տալիս ինտենսիվ մեթոդներով տարվող աշխատանքների բավարար արդյունքները, որոնք, սակայն, բնորոշ չեն Թուրքիայի ողջ գյուղատնտեսության համար։ Ինչ վերաբերում է բամբակի արտադրությանը, ապա միայն նրա մշակման հիմնական շրջանում՝ Ադանայի վիլայեթում, 18 տարում բերքը աճեց տարեկան 400 տոննայից (1896), մինչև 33,750 տոննայի (1914)[53]։ Մուրադ-չայ գետի հովտում, դեռևս անցյալ դարի վերջերին, բամբակի դաշտերը զբաղեցնում էին մշակվող հողերի 15—25%-ը։ Բերքի կեսը օգտագործվում էր տեղում, իսկ մնացածը արտահանվում էր Էրզրում և հարևան այլ շրջաններ։ Թեև նրա մշակումը տեղում կատարվում էր արհեստավորների ձեռքով, սակայն գործը «դրված էր բավական յավ։ Պալու քաղաքում և շրջակա գյուղերում գոյություն ունեին մոտ 140 ջուլհականոցներ, որոնք բավարար եկամուտ էին տալիս 500—700 մարդու»[54]։

Շուկայական ապրանք է դառնում արտադրված ցորենի զգալի մասը, մանավանդ երկրի այն շրջաններում, որտեղ տանելի ճանապարհներ կային, եթե գոյություն ուներ երկաթուղային կապ։ Միայն Հայդար փաշա—Անկարա գծով, նրա բացման առաջին տարին՝ 1893 թ., Կ. Պոլիս է տեղափոխվել 51,300 տոննա հացահատիկ, իսկ 1911 թ. այդ թիվը հասնում է 262,146 տոննայի, այսինքն՝ 18 տարվա ընթացքում աճում է ավելի քան 5 անգամ[55]։

Գյուղատնտեսական բերքը քաղաք է բերվում նաև այն պատճառով, որ հողատերը, որպես կանոն, ապրում է այնտեղ։ Բազմաթիվ են, օրինակ, Մոսուլում ապրող հողատերերը, որոնց վարձակալները պարտավոր էին քաղաքում հանձնել նրանց «բերքի 1/10-ը անջրդի հողերից և նրա 1/2-ը՝ ջրովի դաշտերից»[56]։ Պալու քաղաքի մեծահարուստ հողատեր, վաճառական ու վաշխառու խաշմատյանները «Թեփեքոյ գյուղի գյուղացիներից վերցնում էին բերքի ոչ թե 50 տոկոսը, այլ 60—70 տոկոսը», որը նույնպես հանձնվում էր քաղաքում կամ տարվում Խարփուտ (Խարբերդ) և ուրիշ վայրեր, «նայած որտեղ է վաճառված տվյալ տարվա բերքը»[57]։

Վաճառքի ենթակա մթերք են հանդիսանում նաև բրինձը (Մոսուլ և այլուր), մրգերն ու պտուղները, բանջարեղենն ու յուղատու բույսերը, անասուններն ու նրանց մթերքները։ Մասնագիտացվում են շուկաները. Բաղդատում և Դամասկոսում՝ գլխավորապես ցորենի վաճառք, Էրզրումում՝ անասուններ, Ադանայում, Իզմիրում՝ բամբակ, չորացրած մրգեր և այլն։

Ապրանքային արտադրանքի և շուկաների պահանջարկի աճը ստիպում էր որոշ չափով բարելավել արտադրությունը։ 1874 թ. նոյեմբերի 17-ին ընդունվել է օրենք, որով գյուղատնտեսական և շոգիով աշխատող այլ մեքենաների ներմուծումը ազատվել էր ամեն տեսակի հարկերից։ Շուտով բոլոր խոշոր առևտրական կենտրոններում բացվում են հատուկ խանութներ, որտեղ վաճառվում են գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ։

---

52 Istatistik yllig. cilt 7, 1934—1935, էջ 332։

53 Տե՛ս А. Д. Новичев, նշվ. աշխ., էջ 79։

54 ЦГВИА, ф. 82, оп. 86, д. 3053, թ. 137, 160։

55 Տե՛ս А. Д. Новичев, նշվ. աշխ., էջ 76։

56 П. Томилов, Отчет о поездке по Азиатской Турции в 1904 г., СПб, 1907, մաս 1, էջ 286։

57 ЦГВИА, ф. 82, д. 3053, թ. 135։

Ըստ Իզմիրի ամերիկյան հյուպատոսի 1900 թ. հաշվեկշռության, երկրում տարեկան վաճառվել է 2000 հատ ամերիկյան գութան և 300 հնձող մեքենա[58]։ Ադանայի դաշտերում աշխատում էին 500—600 հնձող և մոտ 60 մեծ կալսիչ մեքենաներ, որոնք օրական 850—900 տոննա հացահատիկ էին արտադրում, արագացնելով այդ պրոցեսը 2—3 ամսով[59]։

Փորձեր էին կատարվում ստեղծել մասնագիտական գյուղատնտեսական դպրոցներ և պատրաստել անհրաժեշտ կադրեր։ Մոտ 15 միջնակարգ ուսումնարաններում և 3 բարձրագույն դպրոցներում (հողագործական, անասնաբուծական և անտառաբուծական), ինչպես և արտասահմանի մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում պատրաստվել էին մի քանի հարյուր մասնագետներ։ Սակայն, ինչպես նշեց Սեբաստիայի (Սվասի) դեպուտատ Ն. Տաղավարյանը Թուրքական պառլամենտի 1909 թ. մայիսի 18-ի նիստում, նրանց մեծագույն մասը իր մասնագիտությամբ չի զբաղվում։ «Մինչև 1896-ին Եվրոպայի մեջ երկրագործություն ուսանող 58 անձերե 35-ն կառավարության պաշտոնյա եղած են, 6-ն երկրագործ, և մնացյալները տարբեր գործերով զբաղվողներ...»[60]։ Այս երևույթը նա բացատրում է գյուղատնտեսության մեջ դրված կապիտալի ցածր շահույթով՝ 100-ին միայն 4%, իսկ որևէ այլ բնագավառում նույն կապիտալը կարող էր տալ մինչև 10% շահ։

Կապիտալիստական հարաբերությունների առկայության ցուցանիշ է նաև արհեստների աստիճանական անջատումը հողագործությունից և նրանց հետագա զարգացումն ու մասնագիտացումը համարյա ամենուր։

Ռ. Բեկգյուլյանցը Էրզրումի վիլայեթի գյուղերի առանձնահատուկ կողմերից մեկն է համարում այն, որ «գյուղացիները ոչ միայն հողագործներ, այլև արհեստավորներ են, որի հետևանքով նրանք շատ արագ կարողանում են վերականգնել իրենց կյանքի բարգրությունը»[61]։ Իսկ մեկ ուրիշ աղբյուր վկայում է, որ կան գյուղեր, որտեղ «ազգաբնակչությունը համարյա բոլորովին չի զբաղվում հողագործությամբ՝ ապրուստի միջոցներ հայթայթելով գլխավորապես այնպիսի արհեստներով, ինչպիսիք են՝ ջուլհակությունը, կոշկակարությունը, դարբնությունը և այլն»[62]։

Այս բարդ իրավիճակում քայքայիչ դեր են կատարում հետզհետե իրենց դիրքերը գյուղում ամրապնդող վաշխառուն և առևտրականը։ Տրված գումարի տոկոսը տատանվում է 10—30—60-ից մինչև 100—200—300-ի միջև՝ հսկողության բացարձակ բացակայության հետևանքով։ Վաշխառությամբ աշխատում է զբաղվել ամեն մի փող ունեցող։

Գյուղացուն վաշխառուի ճիրաններից «ազատելու» նպատակով, 1867 թ. տեղերում ստեղծվեցին գյուղատնտեսական դրամարկղներ («մենեֆի սանդրքլար»)։ 1888 թ. դրանց միավորումից ձևավորվեց գյուղատնտեսական բանկը։ Գյուղացին կարող էր ստանալ վարկ իր հողերը գրավ դնելով։ Նրա ստացած գումարը կարող էր հավասարվել թափուրում նշված հողագնի 50 %-ին միայն։

58 «Вестник финансов, промышленности и торговли», 1901, № 2, էջ 113։

59 «Բյուրակն», շաբաթաթերթ, 1906, № 19, էջ 453։

60 Տոր. Ն. Տաղավարյան, Երկրագործության, անտառաց և հանքաց զարգացումն ու շահագործումը, Կ. Պոլիս, 1909, էջ 12։

61 Р. Бекгулянц (Северянин), По Турецкой Армении, впечатления от поездки летом 1914 г., Ростов-Дон, 1914, էջ 66։

62 ЦГВИА, ф. оп. 86, д. 3053, թ. 390։

Կարճատև վարկը (3—12 ամիս) տրվում էր գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և այլ պարագաներ գնելու համար։ Երկարատև վարկը՝ 1—10, նույնիսկ 15 տարով, տարեկան 6, իրականում 9—10 %-ով[63]։ Հաշված է, որ դրավ դրած հողերի 15—30 %-ը վճարվում էր աճուրդով[64]։ Իսկ դրավ դրած հողերի քանակը աճում էր տարեցտարի։ Այսպես, եթե գյուղատնտեսական բանկի գոյության առաջին տարին՝ 1889 թ., այդպիսի հողերի դիմաց տրված վարկի գումարը կազմում էր 160 հազ. թուրքական լիրա, ապա 1910 թ. այն հասավ 5,435 հազ. թ. լ., իսկ 1914 թ.՝ 6,123 հազ. թ. լ.[65]։ Նույն աղբյուրից քաղած տվյալները վկայում են, որ եթե բանկի մաքուր շահույթը 1892 թ. եղել է մոտ 78 մլն. թ. լ., 1910 թ. այն բարձրացել է 192 միլիոնի, 1917-ին նա ավելի քան 454 մլն. թ. լ. էր կազմում[66]։ Նման պայմաններում վաշխառուն մնում է իր դերում՝ հաստատուն ու անկախ, վստահ ու գոհ իր գոյությունից ու գործունեությունից։ «Վաշխառությունը,— գրում է Կ. Մարքսը,— կարող է շատ երկար գոյություն ունենալ, չառաջացնելով ոչինչ տնտեսական անկումից և քաղաքական կաշառակերությունից բացի»[67]։ Մասամբ այդպիսին էլ եղել է վաշխառուական և առևտրային կապիտալի դերը Թուրքիայում։

Կապիտալիստական հարաբերությունները, այնուամենայնիվ, զգալի կերպով զարգացել էին մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Խնդրի դիալեկտիկան կայանում է նրանում, որ ինչքան վերջինները շատ են զարգանում, այնքան առաջինները ակտիվանում են՝ հնի քայքայման և նորի ստեղծման իրենց դերում։ Այս է ահա Կ. Մարքսի հիշյալ մտքի իմաստը։ Վ. Ի. Լենինը նույնպես նշել է, որ ինչքան ուժեղ է զարգացած վաշխառուական և առևտրային կապիտալը, «նույնքան ավելի թույլ է արդյունաբերական կապիտալի (=կապիտալիստական արտադրության) զարգացումը և ընդհակառակը»[68]։ Բայց նա միաժամանակ գտնում է, որ կապիտալը օգնում է ընդլայնելու առևտուրը, բարելավելու արտադրության պայմանները, ամրապնդելու արտադրության նոր ձևերը և այլն։

Գրականության մեջ գոյություն ունի տեսակետ, որ առևտրի ու կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղատնտեսության մեջ պայմանավորված է գլխավորապես արտաքին շուկայի հետ ունեցած կապերով[69]։ Իհարկե այդ կապերը կան և նրանք մեծ չափերի հասան ուսումնասիրվող ժամանակահատվածում։ Բայց, մեր կարծիքով, մի այնպիսի խոշոր, ոչ գաղութային պետության, ինչպիսին Օսմանյան կայսրությունն էր, տնտեսական զարգացումը նախ և առաջ պայմանավորված էր նրա ներքին գործոններով։ Սրանց թվին էին պատկանում տեղի արդյունաբերության աճը, քաղաքների մեծացումը, տեղական շուկաների ստեղծումը և ընդլայնումը, սրա հետ կապված՝ գյուղատնտեսական արտադրանքի մասնագիտացումը, տրանզիտային առևտուրը և,

---

63 Л. Руппин, նշվ. աշխ., էջ 99։ Սարգիս և Միսակ Բդեյան, Հարազատ պատմութիւն Տարոնոյ, Կահիրե, 1962, էջ 153։

64 Л. Руппин, նշվ. աշխ., էջ 101։ Տե՛ս նաև Սարգիս և Միսակ Բդեյան, նշվ. աշխ., էջ 153—154։

65 Istatistik yllıgı, cilt. 7, 1934 - 1935, էջ 448։

66 Նույն տեղում, էջ 451։

67 К. Маркс, Капитал, т. 3, М., 1936.

68 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 216։

69 Տե՛ս А. Д. Новичев, նշվ. աշխ.։

ի վերջո, արտաքին շուկայի պահանջները։ Վերոհիշյալ հանգամանքների այսօրինակ թվարկումը, մեր կարծիքով, միակ ճիշտ մոտեցումը կլիներ տվյալ հարցի պատասխանը փնտրելիս։ Ամփոփելով պետք է ասել, որ Թուրքիան XIX դարի երկրորդ կեսին թևակոխել էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման փուլը։ Սակայն նրա զարգացման պրոցեսը, մանավանդ գյուղատնտեսության մեջ, ընթանում էր չափազանց դանդաղ ու տանջալից ձևով, հաղթահարելով մեծագույն խոչընդոտներ ու դժվարություններ։

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ РАЗВИТИЯ КАПИТАЛИСТИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ В СЕЛЬСКОМ ХОЗЯЙСТВЕ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

О. Г. ИНДЖИКЯН

(Резюме)

Во второй половине XIX в. сельское хозяйство Османской империи вступает в период развития капиталистических отношений. Признаками неравномерного процесса являются: рост крупного (особенно частного) землевладения при одновременном массовом обезземеливании крестьянства (главным образом немусульманского), отходничество, создание «рабочих рынков», рост цен на землю, внедрение на селе торгово-денежных отношений, усиление связи с рынком и интенсивное ведение хозяйства в европейской Турции, в прибрежных районах и вокруг больших городов, специализация и рост товарной продукции, отделение ремесла от сельского хозяйства и т. д. В связи с этими явлениями в сфере аграрного производства имели место как феодальные формы эксплуатации (барщина, издольщина, исполу и даже личная зависимость крестьянства), так и растущие размеры денежной ренты, наемный труд батраков, сезонных рабочих. Ускоряющим (но не решающим) фактором выступает быстро развивающаяся внешняя торговля.

Развитие капиталистических отношений шло очень медленно, принимало уродливый характер и сопровождалось почти полным отсутствием порядка в землепользовании и земельных отношениях, концентрацией в руках отдельных групп господствующих классов земли, образованием многоукладности хозяйства. Особое значение имели отсутствие законности и полный произвол как со стороны властей, так и всевозможных эксплуататоров — чиновников, офицеров, беков, шейхов, ростовщиков, писарей, заптие и т. д. Несмотря на эти немыслимые для любой европейской страны препоны, капиталистические отношения развивались, и уже в канун первой мировой войны вся страна (за исключением отдельных, порой значительных районов с преобладанием феодального и даже патриархального уклада) была охвачена этим процессом.